ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայերենագիտությունը ծանր կորուստ կրեց. կյանքից հեռացավ անվանի լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Դյանջումի Աբրահամյանը:

Սերգեյ Աբրահամյանը ծնվել է 1925 թ. Արցախի Հադրութի շրջանի Տումի գյուղում: 1942 թ. մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Մեծ հայրենականի մարտերին, 1944 թ. վիրավորվել է և տեսական, ոչ անհետևանք ապաքինումից հետո զորացրվել է: 1950 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, իսկ 1953 թ. ասպիրանտուրան նույն թվականին հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը: Դոցենտ է 1956 թ., 1966 թ. նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, պրոֆեսորի կոչում՝ 1970 թ., իսկ 1996 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Սերգեյ Աբրահամյանի վաստակը անգնահատելի է թե՛ հայերենագիտության ասպարեզում և թե՛ աճող սերնդի հայեցի դաստիարակության գործում: Հայերենագիտության մնայուն նվաճումներ են մոտ երկու տասնյակ մենագրությունները և հարյուրից ավելի հոդվածները, որոնցում դրսևորելով համակարգային մոտեցում, հանդես գալով նոր հարցադրումներով, կիրառելով գիտական կայուն ու հստակ չափանիշներ, լուծում տալով կնճռոտ բազմաթիվ հարցերի՝ նա հասել է ոչ միայն ժամանակակից հայերենի կառուցվածքի ամբողջական քննությանը, այլև նրա առանձին օղակների խոր և համակողմանի վերլուծությանը: Ձևաբանության մեջ այդպիսի արժեքներ են հայերենի դերանունների (1956), եղանակավորող բառերի (1958), չթեքվող խոսքի մասերի (1959) վերաբերյալ ուսումնասիրությունները, իսկ խոսքի մասերի աստիճանական դասակարգման նրա տեսությունը ամենից տարածվածն է ու հիմնավորվածը: Շարահյուսության ասպարեզում ևս նրա մեծ ներդրումը բնութագրվում է ինչպես ընդհանուր համակարգի հաստատմամբ ու մինչ այդ չդիտարկված երևույթների քննությամբ (միակազմ նախադասություն, նախադասությունների կապակցություն), այնպես էլ առանձին հարցերի (բառակապակցություն,

պարզ և բարդ նախադասությունների տարբեր տեսակներ) նոր մեկնաբանություններով, ճշգրտումներով ու բազմակողմանի վերլուծություններով:

Սերգեյ Աբրահամյանի անմիջական գիտական ղեկավարությամբ և տարբեր ծավալուն բաժիններ հեղինակելով են ստեղծվել մեզանում առայժմ միակ ակադեմիական քերականության եռահատորյակը («Ժամանակակից հայոց լեզու», 1974, 1976, 1979) և «Հայոց լեզվի զարգացումը խորհրդային շրջանում» (1973) արժեքավոր աշխատությունը: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» քառահատորյակի ստեղծմանը նա մասնակցել է ոչ միայն որպես կազմողներից մեկը, այլև վերջին հատորի խմբագիրն է: Նա մեզանում առաջիններից է դիտարկել նաև ժամանակակից հայերենի ոճաբանական կառուցվածքը՝ ներկայացնելով ու բնութագրելով լեզվի գործառական տարբերակների ընդհանրական համակարգը:

Լեզվական ճիշտ քաղաքականության մշակման, լեզվաշինության, խոսքի մշակույթի և լեզվի կանոնակարգման բնագավառում անվանի գիտնականի գործունեությունը եղել է թե՛ բեղուն, թե՛ բազմազան: Նրա «Ժամանակակից գրական հայերեն» (1981) աշխատությունը դասական է՝ որպես կանոնական քերականության նմուշ, իսկ ուղղախոսության, ուղղագրության և կետադրության նրա կանոնարկումները երկու տասնամյակից ավելի հաջողությամբ կատարում են իրենց դերը:

Վաստակաշատ գիտնականը նաև գիտության հմուտ կազմակերպիչ էր ու ճանաչված ուսուցիչ-մանկավարժ: 1959 թ.-ից նա ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի բաժնի վարիչն էր՝ զուգահեռաբար վարելով այլ պաշտոններ ևս: Նրա «Ժամանակակից հայերենի քերականություն» (1969), «Աշակերտի խոսքի զարգացումը» (1973), «Հայոց լեզու. բառ և խոսք» (1978) ձեռնարկները, բուհական և դպրոցական դասագրքերը լավագույններից են և մնում են որպես աշակերտի, ուսանողի, ուսուցչի, մասնագետի սեղանի գրքեր:

Սերգեյ Գյանջումի Աբրահամյանը պարգևատրված է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով, Խ. Արովյանի անվան և Աշխատանքային արիության համար մեդալներով, իսկ հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը 2001 թ.-ից կրում է նրա անունը:

Անվանի գիտնականի, մարդու, ուսուցչի և հայրենասերի գիտական ժառանգությունը հայերենագիտության մնայուն արժեքներից է, իսկ նրա վեհ կերպարը անանց հուշ...

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ